

ՄԺ, Բ-Մանր ժամանակագրություններ, Բ(13-18-րդ դդ.), հ.2, Երեւան, 1956: ԺԴ-հձ-ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երեւան, 1950:

ՄԼ ԳԳ-Մարտիրոս Լեւոնցի, Գիրք գաւազանաց (Մատենադարանի թիվ 3079 ձեռագիր):

ՄԺ, Բ, 48-Մանր ժամանակագրություններ (13-18-րդ դար), հ.2-րդ, Երեւան, 1956:

## ԸՆԹԵՐՅՈՂԻՆ

Հրատարակվել «Հայագիտական հանդեսի» (գիտական հոդվածներ և հոդվածներ) ՈՒ-ը, որ նախաձեռնել են Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորատը. «Հայինֆո» գործակալությունը և «Հայաստան» հրատարակչությունը:

Ինստիտուտի գիտախորհրդի 1997թ. դեկտեմբերի 1-ին երաշխավորել է «Հայագիտական հանդեսի» հրատարակչությունը:

«Հայագիտական հանդեսը» հրապարակում է լեզվաբանական, գրականագիտական, պատմական, փիլիսոփայական, արվեստագիտություն և այլ բնագավառներն ընդգրկող հոդվածներ, արխիվային նյութեր, փաստաթղթեր և այլ նյութեր:

Հանդեսի ուղղվածությունը հայագիտական է՝ իր լայն ընթերցումով:

Հոդվածները ընդունվում են երկու մեքենագիր օրինակով՝ 8-10 էջի ծավալով: Յուրաքանչյուր հոդված ունենում է ռուսերեն ամփոփում:

Ձեռագիր օրինակները չեն վերադարձնում հեղինակներին:

**ДОЙМАЛДЖЯН-ГРИГОРЯН К. А. — Некоторые особенности морфологической ассимиляции французских заимствований в среднеармянском языке.** Морфологическая ассимиляция иноязычного слова средствами заимствующего языка является одним из внешних и очевидных признаков, характеризующих заимствование. В настоящей статье дается описание процесса морфологической ассимиляции старофранцузских и среднефранцузских заимствований в киликийском среднеармянском языке.

## ԳՐԱԿԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՄՄԲԱՏ ԳՈՒՆԴԱՏԱՐԼԻ ՄԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Գ. ԴՈՆՈՒՍԱՆՅԱՆ

Մմբատ Գունդստարը՝ 13-րդ դարի Կիլիկիայի հայկական քաղաքության նշանավոր սպարապետը, միաժամանակ եղել է նշանավոր օրենսդիր, մատենագիր և թարգմանիչ: Նա իմացել է մի շարք լեզուներ, հատկապես հմուտ է եղել ֆրանսերենի մեջ և հին ֆրանսերենից կատարել է ուշագրավ ու մեծաթիվ մի թարգմանություն՝ «Անտիոքի Անսիզն», այսինքն՝ Անտիոքի օրենսգիրքը<sup>1</sup>:

Այս օրենսգրքի ֆրանսերեն բնագիրը կորել է, և գիտական աշխարհին այն հայտնի է միայն հայ սպարապետի թարգմանության շնորհիվ:

Մմբատ Գունդստարը ունեցել է քաղաքական փոթորկալից իրադարձություններով լի կյանք: 1248-ին, ինչպես ինքն է վկայում, մեկնել է թաթարների մոտ, և նրա ճամփորդությունը սկսել է երկու տարի, որից հետո վերադարձել է եղբոր՝ Հեթումի պալատը: Կիլիկիայից նա անցել է Բաղդադ, հետո Մամայդանդ, հետո եւս երկու ուրիշ քաղաքություններ, ապա հասել է Ռսկե Հորդա՝ թաթարական արքունիքի դուռը: Երբ ուշադիր զննում ենք մեզ հասած պատմական փաստերը, ապա տեսնում ենք, որ Մմբատ Գունդստարի ճամփորդությունը ապրիլի վում է եղբոր՝ Կիլիկիայի քաղաքում Հեթում Ա-ի ուղևորություն աշխարհագրական երթուղուց: Ըստ Կիրակոս Գանձակեցու Հեթում Առաջինը ընտրել է մեկ ուրիշ ճամապարհ՝ այն անցնում էր Կասպից ծովի հյուսիսով, ուր եւս նա այցելեց Բաթու Խանին իր հորդայում: Հեթումը, սակայն, վերադարձր կատարել է այլ ճամապարհով և Կասպից ծովի մոտից Կիլիկիա է վերադարձել Մեծ Հայքի սարածքով<sup>2</sup>:

Մմբատ Սպարապետը իր ստեղծագործություններով եւ քաղաքական գործունեությամբ հայտնի է ֆրանսիական հայագիտությանը: Նշանավոր ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուան 1862-ին կատարել է Մմբատ Գունդստարի ժամանակագրության մի հասկածի թարգմանությունը<sup>3</sup>:

Նա նշում է, որ այդ ժամանակներում Էջմիածին և այցելել Ռուսաստանի կայսերական ակադեմիայի անդամ Բրոսսեն: Դա տեղի է ունեցել 1848-ին, եւ Բրոսսեն ինն շաա Երջանիկ և զգացել՝ մեկ-երկու օրվա որոնումներից հետո գտնելով անհրաժեշտը: Այդ խնդիրներում նրան մեծ ծառայություն է մատուցել Հովհաննես Շահխաթունյանը՝ մատուցելով գիտնականին երկու արժեքավոր ձեռագրեր, որոնք պարունակում էին անհրաժեշտ նյութը:

Զոռաանանք նաեւ, որ նույն Հ. Շահխաթունյանն է գտել Դաւաթ Գարպեցու «Թուրքը», այն հանձնել՝ Մ. Էմինին, իսկ վերջինիս հրատարակությունից էլ Միքայել Նալբանդյանը կատարել է «Թուրքի» աշխարհի ար թարգմանությանը՝ կցելով մեծաթիվ առաջաբան եւ ծանոթագրություններ, որոնք ցարդ սկզբնաղբյուր լին բացառիկ արժեք ունեն:

Մմբատ Գունդստարի ժամանակագրությունը սկսվում է 951-952 թթ.՝ Բրիստոսի ծնունդից հետո եւ ավարտվում է 1274-ին: 951-952 թթ. մինչեւ մոտավորապես 1165-ը, Մմբատ Գունդստարը վերցրել է Մաթեոս Ռոնայեցուց (Եղեասեցուց) եւ նրա շարունակողից:

Ահա հայագիտական շրջանների համար այսքան ուշագրավ մի մատենագիր է Մմբատ Գունդստարը, որի ֆրանսերենից կատարած օրենսգրքի թարգմանությունը 1876-ին Վենետիկի Միքայելյան հայրերը հրատարակել են՝ նրան կցելով իրենց կատարած ֆրանսերեն նոր թարգմանությունը: Այս հրապարակման մեջ կողք-կողքի գրված են գրաբարյան, այսինքն՝ Մմբատի թարգմանությունը, եւ արդի ֆրանսերենով կատարված հետթարգմանությունը<sup>4</sup>:

«Անտիոքի Անսիզն» օրենսգրքը հիմնականում պարունակում է դատաւարական հոդվածներ՝ նվիրված կալվածատերերի եւ լիճ ճորտերի փոխհարաբերությունների ամենատարբեր բնագավառներին<sup>5</sup>:

<sup>1</sup> Անսիզն - տալում դատաստանի Ատյան, որի մեջ բնում եւ դատաստարում են ոճրագործությունը կամ քրեական հանցանքը: Նրանում գետնվում են քաղաքի օրենսդրական կանոնները եւ կարգերը: Հայտնի են «Անսիզ Անտիոքի», «Անսիզ Երուսաղիմի»: (Տե՛ս, Բաղդիթ արտեսանից եւ գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ, 1897, էջ 182):

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 317-318, 364-365:

<sup>3</sup> Langlois Victor, Extrait de la Chronique de Sempad..., St. Petersbourg, 1862, p. 2.

<sup>4</sup> Assises d' Antioche, reproduites en francais set publiques au sixieme centenaire de la mort de Sempad Le Connitablc, leur ancien traducteur armenien, Venise, 1876.

<sup>5</sup> Լիճ - ամանատերական վարչության մեջ ունեւ կամ ստրակ, որ ունեւ կալվածքների մեջ ինչ-որ մաս, որով տուալել եւս կապվում էր կալվածատերերին, իսկ կալվածատիրոջը՝ տուրք տալ, զինվոր տալ:

Գրական առումով շատ կարեւոր են այս թարգմանության երկու հասկածները՝ առաջաբանը և վերջում կցված հիշատակարանը:

Առաջաբանում Սմբատ Գունդստաբլը նշում է, որ իր թարգմանած «Անտիոքի Անսիզը» կազմված է 17 գլուխներից: Այդ բնագիրը ինքը ստացել է Սիր Սիմոնից, որն Անտիոքի Գունդստաբլին էր, վերջինս էլ այն ստացել էր իր հորից՝ Սիր Մանսել Գունդստաբլից: Թարգմանության շարժառիթը եղել է Կիլիկիայում օրենսդրական դաշտի ուժեղացումը, մարդու իրավունքների զիտակցումը, կամայականությունների վերացումը: «...Ես աշխատեցի եւ փոխեցի ի հայ լեզուս: Եվ արդ զի տվորութեամբ այն Անսիզովն կու զնայի ազգս մեր եւ դարպասս Հայոց եւ սղալումն ինչ կու գայր մեզ վասն տղիտութեան եւ վտանգութիւնք ոգուց, եւ պղերգանք ինչ վասն հարցանելոյ անդ զմեծամեծ դատաստանսն, եւ ես ուժգին տենչմամբ եւ բազում աշխատութեամբ գտի զսա.....»<sup>1</sup>:

Առավել արժեքավոր է «Անսիզն Անտիոքայ» հիշատակարանը, որը չափաժող է եւ ամեն առողն ավարտվում է ի հանգով: Հիշատակարանում կան կենսագրական եւ պատմական կարեւոր փաստեր: Սմբատ Գունդստաբլը Հայկագուն էր, Քրիստոսին հավատացողը եւ Հայաստանի սպայապետը ու Պապեռոն բերդի տնօրենը, Կոստանդին անդրանիկ որդին եւ Հեթում Առաջին թագավորի եղբայրը: Իր թարգմանությունը կատարել է «չար ժամանակներում», երբ Եգիպտոսի մահմեդականները հարձակվել էին Կիլիկիայի վրա, սպանել էին Թորոս թագավորին, այրել էին Սիս եւ Մսիս քաղաքները եւ հետո Հեթում Ա-ի որդուն՝ Լեւոնին, տարել էին զերի<sup>2</sup>:

Հիշատակարանում Սմբատ Սպարապետը նշում է, որ ինքը երկար չի կարող խոսել այդ մասին, որովհետեւ «Նա շատ առնոյր թուխք եւ տեղի»: Նա հիշում է նաեւ Լեւոնի ազատվելը գերությունից եւ վերջում թվարկում է իր հարազատներին՝ մորը՝ Ալիծին, եղբայրներին, քույրերին, իր որդիներին՝ Հեթումին, Օշինին, Կոստանդինին եւ իր կնոջը՝ Թեֆանդին (Մաեֆանին): Սմբատ Գունդստաբլը հիշատակարանում խոսել է նաեւ գրության թվականի՝ 1269-ի մասին: Ներկայացնում ենք հիշատակարանն ամբողջությամբ մեջ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍՄԲԱՏԱՅԻ ՃԱՇՈՅ ԳԻՐՍ  
ՓԱ՛ՌԶ ԱՍՏԾՈ ԱՍԵՆԱՅՆԻ՝

Գոյիցս էիցս ամենայնի,  
Որ ինքն է մէն, վ' այլ չըլնի,  
Տէր եւ պարոն անփոխարինելի:  
Ի թվականիս Հայոց զըրի՝  
Յիւրքն հարոյր փառնիսարնի,  
Ես Սմբատս Հայկազնի՝  
Ծառայս եւ հողս Քրիստոսի,  
Եվ սպայապետ Հայոց զնդի,  
Տէր ամրոցիս Պապեռանի,  
Անդրանիկ հարն իմ Կոստանդնի,  
Եղբայր Հեթումյ թագաւորի,  
Որ ցանգացա եւ սիրեցի  
Չմայրն իմ սուրբ եկեղեցի  
Եվ զինչ ի նմա իսկ ընթեռնի,  
Ամբողջ ի լման ի մէկ փարի  
Չամէնն ի անա հավաքեցի,  
Հայնց որ ով որ զսա ունի՝  
Նա բնաւ ի յայլ զիրք չսնգի:  
Բայց եւ զայս ալ զրել պիտի,  
Թէ երբ սկըսար կամ կարեցի  
Չապրուածային փառս'ի կարգի:  
Սկիզբն էր ի չար ժամանակի,  
Երբ Մարցին եկն ի Մատի  
Վ' եսպան զԹորոս թագավորորդի,  
Եվ ալը բազումք'ի նոյն զկնի,  
Վ' այրեց զՍիս եւ զՄսիս,

<sup>1</sup> Assises d' Antioche..., Preface.

<sup>2</sup> Պատմական այս փաստը ժողովրդական բանականության մեջ արտացոլվում է «Ալա-խ, ըզԼեւոնն տսեն» սկզբածրով երգում (Տես՝ Մնացականյան Աս., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երեւան, 1956, էջ 228-232):

Եվ զինչ որ շէն կայր ի միջի,  
Եվ զԼեւոնն աւագ որդի՝  
Հեթումյ Հայոց մեծ արքայի  
Տարաւ ծառայ վ'եղ ի բանդի  
Ի քաղաքն Եգիպտոսի:  
Բայց զո'ր ամեն աստ ի զրի  
Չառ եւ աւար եւ զարոյննի,  
Կամ զհամարքն ծառայի,  
Չորս ըստ մեղաց եհաւ երկրի,  
Որ քէ զամէնն զրել էի՝  
Նա շատ առնոյր թուխք եւ փեղի:  
Բայց յաջողմամբն Քրիստոսի  
Ի վերոգրեալն թվականի  
Որ զընթերցվածքս կարեցի  
Չեռամբ զրչի Կիրակոսի,  
Չերծաւ Լեւոնն թագվորորդի  
Վ' երեկ ի յիր փուն եւ փեղի:

Եվ զայս չեռամբ իմով զրեցի  
Չի հիշարակ ինչ եղիցի,  
Տրուպ եւ անզեղջ մեղաւորի՝  
Սմբատայ Գունդստաբլի,  
Հար իմոյ Կոստանդնի  
Եվ մար իմոյ Տաւ Ալիծի,  
Եղբայրց եւ քերց նաեւ ազգի,  
Չնոյն եւ որդոց իմում զկնի՝  
Հեթումյ, Աշնի եւ Կոստընդնի,  
Եվ մար սոցին Թէֆանաի,  
Որ որ զըբան վ'ասեն բարի,  
Կամ ըղջալից Տէր Ողորմի,  
Նա՛ ռաբաշիր Տէրն ամենի  
Բազմապարիկ փայ իր բարի  
Աստ'ի ներկայս, այժմ եւ զկնի՝:

Սմբատ Գունդստաբլը 5-րդ դարի պատմիչների եւ 12-13-րդ դարերի Կիլիկիայի գրականության ավանդների օգնությամբ շարունակողն է: Իր թարգմանության առաջաբանում նա ունի մի խոստովանություն-վկայություն. այն վերաբերում է իր կատարած օրենսգրքի թարգմանական ճշգրտությանը: Ինքը թարգմանությունն ավարտելուց հետո այն ուղարկել է Անտիոք՝ բնագրի հետ հարազատությունը ստուգելու խնդրանքով եւ ստացել է խրատական պատասխան, որից հետո միայն իր կատարած թարգմանությունը՝ «Անտիոքի Անսզն», դարձել է հանրության սեփականությունը: Սա խոսում փաստ է զրքի եւ օրենքի նկատմամբ մեր հների ունեցած բացառիկ պատասխանատվության մասին, պարտավորեցնող է այսօր, վաղը, ընդմիշտ:

**ДОЛУХАНИЯ А. Г. — Из истории редкого перевода Смбата Гундстабла.** Смбат Гундстабл, выдающийся полководец 13-го века, был главнокомандующим войск Киликийского царя Хетума Первого. Он одновременно был историком, законодателем и переводчиком. Его перевод Антиохского Судебника со старофранцузского имеет редчайшее филологическое значение, так как французский первоисточник потерян и научному миру известен только армянский перевод. В статье рассматриваются предисловие и послесловие (հիշատակարան) перевода, которые имеют познавательные и историко-литературные значения.

<sup>1</sup> Պաեպանել ենք 1876 թվականի «Լեւոնիկյան իրատարակության բնագրի ուղղագրությունը: